

ՄՐՑՈՒՅԹ

**ՀՀԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ / ծածկագիր՝ 3. 2-1/
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԸՋՐԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

- ունի առնվազն միջնակարգ կրթություն,

- ունի <<Համայնքային ծառայության մասին>> ,

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ,

<<Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի>> ,

<<Բյուջետային համակարգի մասին>> ,

<<Գնումների մասին>> օրենքների և իրի ազդրությունների հետ կապված իրավական կատերիան հրաժեշտի մացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և ակունակություն:

- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

-

ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու և ակունակություն

- տիրապետում է որևէ օտրալեզվի

Առաջատար մասնագետը՝

ա/ Կատարում է ՏԻՄ-ում և աշխատակազմում մուտքագրված հարկերի, տուրքերի, վարձավճարների ծրագրերի ինֆորմացիոն բազայի և մյուս գործառույթների հետ կապված այլ տեղեկատվությունների համակարգչային զետեղման աշխատանքները

բ/ Կատարում է օպերատորական ողջ աշխատանքները

գ/ համակարգիչ է մուտքագրում համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցութային և ատեստավորման թեստերը և համայնքային ծառայության հետ կապված մյուս փաստաթղթերը

դ/ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ համակարգիչ է ներմուծում հաշվետվությունների, տեղեկանքների նախագծեր , կատարում է իր իրավասության ոլորտին վերաբերվող բոլոր հարցերի ուսումնասիրություն և առաջարկություններ և ներկայացնում աշխատակազմի քարտուղարին,

ե/

աշխատակազմի քարտուղարին ըստ անհրաժեշտության ներկայացնում է իր կողմից սպասարկվող բնագավառին վերաբերվող աշխատանքների մասին զեկուցագիր, առաջարկություններ և դրանց բարելավման ուղղությամբ մեթոդական ցուցումներին և փ

ագծեր, իրականացնում է ՏԻՄ-

ի գործառույթների համակարգչային մուտքագրման գործառույթներ

զ/ Որպես պատասխանատու հանդես է գալիս համայնքի պաշտոնական կայքում տեղեկատվության հասանելիության ապահովման, արդիականացման և տեղադրման գործընթացի կազմակերպման համար:

է/ իրականացնում է իրեն մակագրված դիմումների, առաջարկությունների և գրությունների ուսումնասիրություն, նախապատրաստում է դրանց վերաբերյալ պատասխաններ և ներկայացնում է աշխատա կազմի քարտուղարին, մասնակցում է մրցույթների ևատեստավորման գործի կազմակերպման աշխատանքներին

ը/ Իրականացնում է իր պաշտոնի անձնագրով սահմանված այլլիազրություններ

Առաջին կարգի մասնագետը ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ/ սոցիալական երաշխիքներ/ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ / սահմանափակումներ/:

Մրցույթը կկայանա 2021թ. Հունվարի 14-ին ժամը 11:00-ին, Լճաշենի համայնքապետարանում : Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով՝ այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների) պատճենները՝ բնօրինակների հետ միասին
- արական սեռի անձինք նաև զիվորական գրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք
- մեկ լուսանկար 3x4 չափսի
- անձնագրի պատճեն (բնօրինակի հետ)
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել

անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9-ից մինչև 18-ը՝ բացի շաբաթ, կիրակի օրերից՝ Լճաշենի համայնքապետարան /հասցե գ. Լճաշեն 2-րդ փողոց 24 շենք, հեռախոս՝0261-2-74-17/ և Գեղարքունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ վարչություն /հասցե ք. Գավառ կենտրոնական հրապարակ 7, հեռախոս՝026422332/ : Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2020թ. Դեկտեմբերի 29-ը՝ մինչև ժամը 18 :00-ը :

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ՝ գ. Լճաշեն 2-րդ փողոց 24 շենք, հեռախոս՝0261-2-74-17/ :

Լճաշենի համայնքապետարան: